

Մշակույթի Ամսուան Նուիրուած Հանդիսութիւն Սուրբ Գրիգոր Լուսաւորիչ Եկեղեցւոյ Ա. եւ Մ. Յովսէփեան Վարժարանէն Ներս

Վերամուտէն անմիջապէս ետք, մեր դպրոցէն ներս հաճելի աւանդութիւն մը դարձած է, ամբողջ Հոկտեմբեր ամսուան ընթացքին, Մանկապարտէզէն մինչեւ Ը. կարգի աշակերտները տեսնել բեմին վրայ Հայ Մշակույթին նուիրուած հանդէսին ներկայացնելիք իրենց պատրաստական փորձերու ընթացքին: Առ աջնորդութեամբ եւ կազմակերպութեամբ հայերէն դասաւանդող ուսուցչուհիներուն մեր այս տարուան Հայ Մշակույթին նուիրուած երեկոն տեղի ունեցաւ, Հոկտեմբեր 30ին դպրոցիս սրահէն ներս, ներկայութեամբ եկեղեցւոյ հովիւ Տէր Սարգիս Աւագ Քահանայ Փետրեանին, տնօրէնութեան, ծնողներու, ուսուցչական կազմին եւ աշակերտներուն:

Բեմը յարդարուած էր մեր արուեստի ուսուցիչին գծագրութիւններով, որոնք դիմանկարներն էին օտար հայագէտներ՝ Լորտ Պրայսի, Հէնրիխ Հիւպշմընի եւ Անատոլ Ֆրանսի: Բացման խօսքը փոխանցեց Տիկին Լիզա Մանուէանը, որ անդրադարձաւ հայերէն լեզուի եւ հայեցի դաստիարակութեան անհրաժեշտութեան վրայ, մէջբերումներ ըրաւ վերոյիշեալ հայագէտներու հաստատումներէն՝ «Հայ ազգը կ'ապրի իր լեզուով. ո՞ր է հզօր Հոռմը», «Ո՛ր Հայերէն լեզուներուն ամենէն գեղեցիկն էս. որովհետեւ գիտեմ քեզ», եւ շնորհակալութիւն յայտնեց ծնողներուն, որոնք գիտակից են յաջորդ սերունդին հայապահպանման կարեւորութեան եւ կը սատարեն այդ աշխատանքին համախմբուելով հայկական վարժարանին շուրջ:

Մանկապարտէզէն մինչեւ Ը. կարգի աշակերտները ներկայացուցին ճիշտ յայտագիր մը, որ կ'ընդգրկէր հայ մշակույթի այլազան մարզերը: Մանկապարտէզէն-Գ. կարգերու աշակերտները արտասանեցին ու երգեցին, Դ. կարգի աշակերտներուն իւրաքանչիւրը մարմնացուցած էր մեր պատմութեան եւ գրականութեան դէմքերէն մէկը, եւ բեմ բարձրացան Է. եւ Ը. կարգի կարգ մը աշակերտներուն արտասանած՝ Յ. Թումանեանի «Հայոց Լեռներում» ոտանաւորին ընթացքին: Ե. կարգի աշակերտները խանդավառեցին մթնոլորտը իրենց «Թամզարա» պարով, իսկ Զ. կարգի աշակերտները բեմականացուցին Ա. Իսահակեանի «Ամենէն Պիտանի Բանը» թատրոնը, որուն պատգամը այն էր, որ մարդկութեան համար ամենէն պիտանին գիտութիւնն է: Յայտագրի աւարտին Է. եւ Ը. կարգերէն խումբ մը աշակերտներ արտասանեցին Պարոյր Սեւակի՝ «Քիչ Ենք, Բայց Հայ Ենք» ոտանաւորէն բաժիններ:

Տնօրէն՝ Պրն. Ծահէ Մանկրեանը, իր խօսքին մէջ շնորհակալութիւն յայտնեց աշակերտներուն, որոնք ամենայն պատրաստակամութեամբ եւ ուրախութեամբ պատրաստած էին սոյն ձեռնարկը եւ բեմ հրաւիրեց եկեղեցւոյս հովիւը, որ իր պահպանիչով փակեց ձեռնարկը:

Ներկաները հիւրասիրուեցան հայկական հատիկով, որ պատրաստուած էր մեր դպրոցի խոհարարուհիին՝ Տիկին Ռահէլ Թիթիգեանին կողմէն:

Յատուկ շնորհակալութիւն յայտագիրը պատրաստող ուսուցչուհիներուն՝ Օրդ. Փէկի Ծինպաշեանին, Օրդ. Էլմիրա Սիմոնեանին, Տիկին Յուլիէ Գէորգեանին, Տիկին Կարին Սէօլեմեզեանին եւ Տիկին Լիզա Մանուէանին, որոնք ամէն տարի ճիգ չեն խնայեր սոյն ձեռնարկը յաջողութեամբ պատկերելու:

Թղթակցութիւնը Վարժարանէն